տրիարքի ձեռքով, նոյնին ընդօրինակութիւնը կը գտնենք հոս.

«Ցիշեա Տէր զհոգիս հանգուցեալ գոնցոլ մահտեսի Մուրատ աղային և կողակցոյն մահտեսի Հեղինէ խաթունին և զհոգիս ծնողաց և արենակցաց սոցա մահտեսի Յարութեան, Անանայի, Յակոբայ, Յովհաննէսի, Հոլիփսիմեայ, Յուստիանեայ, Գէորգայ, Խաչատրոյ և Սրբուհւոյ, եւ ամենայն ննջեցելոց եւ թողութիւն շնորհեա մարդկօրէն սխալանաց և զկենդանի որդեգիրս սոցա զգոնսոլ մահտեսի Յակոբ Սրապիոնեան և զմահտեսի Յակոբ Սրապիոնեան և զմահտեսի Յակոբ Ղազարին պահեա ի շնորհս քո առաքինութեամբ եւ իշխանական յաջողութեամբ ընտանեօք և զաւակօք և ազգականօք։

Նորոգեցաւ ի պատրիարքութեան տեառն Զաքարեայ արքեպիսկոպոսին 1845.»

ՄՈՒՐԱՏ ՀԱՐՍԼԻ, ՇԱՄԱԽԵՑԻ.— Հայազգի ոսկերիչ մը որ Գրիգոր Պարոնտէր պտրք.ի ժամանակ Ս. Յակոբի վանքը կ'այցելէ և յիշեալ պատրիարքին հրամանով կը շինէ Ս. Յակոբի եկեղեցիին համար ոսկեղէն և արծաթեղէն անօթներ. (Սաւաշան, էջ 700)։

ՄՈՒՐԱՏ (մահ.) ՄՈՒՐԱՏԵԱՆ, ՊՈԼՍԵՑԻ.— Գանձապետ Ս. Յակոբի վանքին. Սարգիս դպիր Յովհաննէսեանի ձեռագիր Ստամպոլի Պատմութեան մէջ կը կարդանք հետեւեալը մահ. Մուրատի մասին. «Մուրատ օղլենց պապն, զմահտեսի Մուրատն Սրբոյն Երուսաղէմի գանձապետ դրին. մեծ սիւնհոդոսին ի սուրբ Աստուածածնի եկեղեցի. ի թուին Հայոց ՌՃԾԴ (=1705), տես զհրաշքն որ առաջմանէ չատ թէքլիֆ ըրին չէր կամեցեր. յետոյ յայն օրն փետրուար 2, շաբաթ, վիճակ ձգեցին, վիճակն նմա եկաւ. որ զարմացաւ բոլոր ժողովուրդն, և վախճանեցաւ ՌՃԾԹ (=1710) նոյեմբեր 28», (Ընդոր. 1901, էջ 126)։

ՄՈՒՐԱՏ ՅԱՐՈՒԹԻՒՆ ԱԲՐԱՀԱՄԵԱՆ, ԲԵՐԻՍՑԻ, ԵՒ ՈՐԴԻՆ ԱԲՐԱՀԱՄ.—(1801—1848). հմուտ էր հայերէնի, Իտալերէնի և Նկարչութեան։ 1830ին Տեսուչ ժառ. Վարժ.ին Արմաչի մէջ։ Առաջարկութեամբ Զաքարիա պտրք.ի Մուրատ վարժապետ Երուսաղէմ կը փոխադրուի նոյն պաշտօնով՝ 1846ին կը հրաժարի (Սաւաշան, էջ 1249). կը դառնայ Նիկոմիդիա՝ ուր կը վախճանի 1848ին և կը թաղուի տեղւոյն գերեզմանատունը և ա-